Մրցույթ՝ Երևանի «Հ. Խաչատրյանի անվան թիվ 199 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (9 դասաժամ), տեխնոլոգիայի (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3 X 4 չափի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը առկայության դեպքում,
5. ինքնակենսագրություն (Ձև 5),
6. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև հունիսի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}-ից 15^{00}-ը (բացի շաբաթ և կիրակի օրերից):
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ սահմանված կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. հուլիսի 4-ին՝ ժամը 14^{00}–ին**, Երևանի Հ. Խաչատրյանի անվան թիվ 199 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս:
Տեղեկությունների համար զանգահարել (010)36-92-41 հեռախոսահամարով: